ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Ծանուցման տողը առաջին տեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքհազարանոցի անգամներու համար 20 0|0 զեղչ կըլլայ։
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Դրութիւնք ետ չեն տրուիր

Արտասահմանի ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի)(15 ՍԱՆԹԻՄ)(

ՈՐՏԵ՞Ղ ՀԻՄՆԵԼ

Արտասահմանի հայ մամուլը սկսել է զբաղվել ազատ երկրներէն մէկուն մէջ հայ կանոնաւոր դպրոց հիմնելու հարցով։ Ոմանք ուզում են Բուլգարիայում հիմնվի, ոմանք, Փարիզում և Եգիպտոսում։

Այդ հարցով զբաղվելը ապացոյց է թէ կանոնաւոր դպրոցը պահանջ է դարձել արտասահմանի հայերիս համար։

Ի հարկէ այդ դպրոցը միջնակարգ և դրական ուղղութիւն ունեցող մի դպրոց պէտք է լինի, որովհետեւ բարձրագոյն դպրոցի թէ պէտքը չը կայ, և թէ մենք անկարող ենք Եւրոպայում հայ համալսարան պահել։ Պէտքը չը կայ, որովհետեւ Եւրոպայում շատ համալսարան և բարձրագոյն մասնագիտական դպրոցներ կան, մեր կանոնաւոր միջնակարգ դպրոցում (եթէ ունենանք) աւարտածները կարող են իրենց ուսումը կատարելագործել այդ համալսարաններից մէկում, ինչպէս անում են բուլգարները և սերբերը։ Համալսարան չենք կարող պահել նրա համար, որ ահագին դրամագլուխ է պէտք։

Հիմա խնդիր է թէ ո՞րտեղ հիմնվի այդ միջնակարգ դպրոցը։ Մեր կարծիքով այդպիսի մի դպրոց Փարիզում հիմնելը բոլորովին աննպատակայարմար է, նոյնպէս ոչ է բուն Եւրոպական քաղաքում, ուր հայ ժողովրդային գաղութ չը կայ։

Միջնակարգ դպրոցի աշակերտները առհասարակ պէտք է իրենց հարազատ միջավայրի մէջ կրթվեն և դաստիարակվեն, որպէս զի Եւրոպայում իրենց կրթութիւնը կատարելագործելուց յետոյ՝ լաւ զգան թէ իրենց ժողովուրդը ինչ ցաւեր, պակասութիւններ ունի և իրենք պարտական են այդ բոլորը դարմանելու գործին եռանդուն կերպով մասնակցել։ Ընդհակառակը՝ եթէ իրենց դեռափթիթ հասակում Եւրոպա անցնեն՝ ժողովրդը և նրա ցաւերը նրանց անծանօթ պէտք է մնան. նրանք պէտք է օտարանան ու խուսափեն հայ ժողովրդի հետ ապրելուց և նրա մէջ գործելուց։

Ճիշդ է, կարող է պատահել որ այդ տեսակներից հանճարներ դուրս գան և իրենց օտարին ծառայող հանճարով, ինչպէս շատ զէվզէկներ ասում են՝ «հայուն փառք կը բերեն», բայց հայ ժողովուրդը դրական օգուտ չի ունենալ դրանցից, ինչպէս չէ ունեցել Լօրիս Մելիքոֆներից և Նուբարներից. իսկ հայ ժողովրդի դրամով օտարի համար Լօրիսներ, Նուբարներ և կամ թէ Ասիաեւրոպացի անորոշ տիպեր ստեղծելը կատարեալ ապուշութիւն կը լինի։

Այո, բէալական ուղղութեամբ մի միջնակարգ դպրոց անհրաժեշտ է արտասահմանում։ Բայց նա պէտք է հիմնվի այնպիսի մի հայ գաղութի մէջ, որը թէ իր կեանքով, թէ բարքերով նմանում է բուն երկրի հայ ժողովրդին։ Եւ այդ գաղութը Բուլգարիայի հայ գաղութն է. մանաւանդ որ ինքը բուլգար ժողովուրդը բաւական նմանում է հայ ժողովրդին իր բարքերով և Եւրոպական հռչակաւոր ապականութիւնը գոյութիւն չունի այստեղ, որը շատ կորստաբեր կարող է լինել մատաղահաս հայերի համար։ Բուլգարիայի հայ գաղութը մի ուրիշ և շատ նշանակելի առաւելութիւններ ունի. նախ որ մօտիկ է Ռումանիային և Աւստրիային ուր հայերը կորչելու վտանգին են ենթարկված, մօտիկ է Կովկասին և Տաճկաստանին ուր ազատ և կանոնաւոր դպրոցներ ունենալ այլեւս անկարելի է։

Վերջապէս կեանքը համեմատաբար շատ աժան է։ Բուլգարիայում հիմնված դպրոցը կարող են գալ Պոլսից, Ադրիանապոլսից և դրանց շրջակայ քաղաքներից, Կովկասից, Սեւ Մովի տաճկական քաղաքներից, Ռումանիայից, Աւստրիայից. նոյնիսկ միջակ կարողութեան տէր մարդկանց զաւակներ. իսկ Եգիպտոս կամ Փարիզ հեռու տեղերից կը գնան կամ բոլորովին ձրիները, կամ թէ շատ հարուստ մարդկանց զաւակներ։

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 23 Մարս

(Շար. նախորդ թիւին եւ վերջ)

Գուրպան պայրամին առաջին վայրկեանին տանկ փորձանք... Գէշ նշան, ընթերցող, գէշ նշան... մանաւանդ նախապաշարումներով լեցուն բնռապետի մը ուղղին համար։

* *

Գէթ եթէ միայն այդ ըլլար... բայց կան խել մը երեւոյթներ որ Համիտի քունը կը կտրեն, կեանքը դժոխք կը դարձնեն։

«Բերա-Բալաս» հիւրանոցը իջած է եղեր հարուստ իտալացի ճամբորդ մը — ծպտեալ անարշիստ մը որ եկած է եղեր Համիտը զարնելու։ Աղէկ կապրի եղեր, ոչ ոքի հետ յարաբերութիւն չըներ և կուզէ եղեր իր դեսպանէն թուղթ մը առնել սելամլըքի երթալու պօմպա մը նետել... կըսեն։

Լրտեսները հոտը կառնեն։ Մէկ մը կերթայ դուրս. կը կանչէ, մարդը կելլայ և այլեւս յետ չի դար։ Կարաւ ընդմիշտ։

* *

Տարբեր վրդովեցուցիչ դէպք մըն ալ։ Պանք Օթոմանին տակը ներքին ուղի, ական մը, թիւնէլ մը փորեր են։ Թուրքերը կըսեն հայ կոմիտէներու գործն է։ Ես կը կարծեմ գողութեան համար փորուած անցք մըն է, եթէ յիրաւի ատանկ բան մը կայ. աս ամիսէ մը աւելի է իբր թէ ոստիկանութիւնը գտած է այդ ճամբան, բայց դեռ ետ առ թիւ հայ մը չէ ձերբակալուած։ Արդեօք յիրաւի ատանկ բան մը կա՞յ, թէ շինծու, ստեղծովի գործ մըն է — չեմ գիտեր։ Թերեւս հնարած են, որ քիչ մը աւելի զոհեր նետեն ծակը...

* *

«Առաւել քան զամենայն» վերդովեցուցիչ։ Պալատական լրտեսները «Մէրասիմ քէօշկին» մէջ (Եըլտըզի մէկ քէօշկը, ուր օտարահպատակները կը կենան սելամլըքի ատենը) խել մը տինամիտի քարթուշներ կը գտնեն և Համիտի կը ներկայացնեն։ Համիտ կը սոսկայ ու իսկոյն կը հրամայէ քանդել այդ քէօշկը ու իր ծախքով վերաշինել։

Զար լեղուները կըսեն որ յերեսները նետեր են այդ պայծ թուցիկ խրտուիլակները, իրենց բռնապետը միշտ սարսափի մէջ պահելու և աւելի ստակ շորթելու համար։

Աս չափ գէշ երեւոյթներու վրայ աւելցաւ և երկրաշարժը պայրամի փառաւոր հանդէսի առտեն... ալ Համիտ կը վախնայ և կը վախնայ։

Հիմակ հասկցէք մեր վեհապետի հոգեկան վիճակը։

* *

Գաւառներէն վայնասունը երբէք չի կարիր։ Զմեռը երկար է եղած ամէն տեղ, չափէն աւելի խիստ ու երկարատեւ։

Տիւրիկի մէջ թիֆոն մարդ չի թողներ կը կոտորէ։ Թուրքէն սովի զոհ գնաց, սովէն ալ ապատածը թիֆոյին կը զոհուի... Բժիշկ չիկայ, չնորհիւ Վեհ. Սուլթանի... ճանճերու պէս կը կոտորուին։

Աղքատութիւնը արդէն չափը անցուց Վանայ մէջ... Մուշէն վերջերս լուր է հասեր, որ 50 հոգի ձերբակալած է կառավարութիւնը իբր յեղափոխականներ կասկածելով զանոնք։

Սղերդէն լուր եկաւ, որ Տէր Փառէն վարդապետ, տեղւոյն առաջնորդը ձերբակալուեր և Մուշ է տարուեր։ Հոս պատրիարքարանը զէվզէկ խօսքեր կընէ «չէ ձերբակալուեր և գործով Մուշ է գացեր և պէտք է վերադառնայ»։

ԲԱԺ

ԲԷՕՍՏԷՆՃԷ, 25 Մարտ

Երզնկայէն եկող մարդոցմէ և մասնաւոր նամակներէ կիմանանք որ Երզնկայի վիճակը երթալով կը վատթարանայ։ Այնպէս որ ժողովուրդը սաստիկ նեղուելով հարստահարուելով, թէ մասնաւոր թուրք անհատներէ և թէ կառավարութենէ կուզէ երկրէն դուրս ելլալ։ Եթէ այս անտանելի վիճակը շարունակուի, հաւանական է որ ժողովուրդը բոլորովին գալթէ։ Հայերը մէկ մէկ կսպաննուին, կը վիրաւորուին, հողերնին զօրով կը խլուի և կառավարութիւնը տուժողներու բողոքին բոլորովին ականջ չի կախեր։ Ղինուորական տուրքը չորս տարուանը մէկէն կուզեն գանձելամենայն անխղճութեամբ, գիւղացիները արդէն բան մը չունին, և ունեցած հատիկ մը հղը, ֆամ էշը կը ծախեն և տուրքի փոխարէն կը գանձեն։ Այդ բաւ չէ, ճամբայ չինելու խնդիրն ալ կայ։ Քսան տարիէ ի վեր կառավարութիւնը ճամբայ կը չինէ և գիւղացիները պարտաւոր են կամ չորս օր ձրի այիրատիլ, կամ թէ 20—22 ղրուշ վճարել կառավարութեան։ Պաշտօնեաները անցագիր առնողներու արիւնը մինչեւ որ չի ծծեն չեն տար։

ՎԱՀՐԻՃ

ՊՈԼՍՈՅ ՊՈՒԼԿԱՐ ԷԿԶԱՐԽԸ

Ռուս Նովոյէ Վրեմիա թերթի Թղթակից Վօժին, տեսակցութիւն մը ունեցեր է Էկզարխին հետ, որուն միջոցին Էկզարխը Մակեդոնական գործերու մասին հետեւեալը ըսեր է։

«Մակեդոնիոյ մէջ ապստամբութիւն չի կայ։ բայց Թուրք կառավարութիւնը կը վախնայ որ բռնկի։ Այդ կարելիութիւնը ոչնչացնելու համար, արդէն երկու ամիս է որ կառավարութիւնը հրաման տուած է դաւադրութեան հեղինակները ձերբակալեն եւ պահեստի զէնքերը դրաւեն։ Բոլոր մեծ կեդրոններու մէջ, ուր պուլկար բազմութիւն կը ցանուի խուզարկութիւններ կը կատարուին. դաւադրութեան հետքեր գտնուեր են, նոյնպէս թղթեր, մասնակցողներու եւ գլխաւորներու ցանկեր։

Շատեր ձերբակալուած եւ զնտաններու մէջ նետուած են, իսկ շատեր ալ արդէն աքսորուած են։

Մակեդոնական կոմիթէն Սարաֆոֆի նախագահութեամբ՝ Թրքական բռնակալութեան դէմ բողոք մըն է. երբ վարչութիւնը բարեփոխուի, անձնական ապահովութիւնը եւ արդարադատութիւնը ապահովուին, կոմիթէն իր ուժը պիտի կորսնցնէ։

«Կոմիթէի նպատակն է Պերլինի վեհաժողովով խոստացուած բարենորոգումները ձեռք բերել, այսինքն քրիստոնեայ նահանգապետ նշանակուի եւ քրիստոնեայ ոստիկանութիւն...

Կոմիթէն մեծ ազդեցութիւն ունի ժողովրդին վրայ. բայց անոր ամենամեծ աջակիցը նոր սերունդն է. հիմա Մակեդոնիոյ մէջ շատ երիտասարդներ կան, որոնք իրենց կրթութիւնը Եւրոպայի մէջ առած են. ատոնց համար անհանդուրժելի է Թրքական ըէժիմը։ Տեսած են ուրիշ քաղաքակրթուած ազգեր, չեն ուզեր եւ չեն կրնար սպասել։ Առաջ, երբ ժողովուրդը իր յառաջադիմութեան առաջին շրջանի մէջ կը գտնուէր, Թրքական ըէժիմը տանելի էր. այսօր այդ անկարելի է... իսկ ամէնքս ալ գիտենք որ Թուրքիայէն բարենորոգում չի սպասուիր»...

Սերպիոյ եւ Պուլկարիոյ միջեւ համաձայնութիւն կայանալու մասին, Էկզարխը հետեւեալը ըսած է.

«Անկարելի է. սերպերը մեր ամենագլխաւոր թշնամին են։ Անոնց հետ իրար հասկնալը մտքէ դուրս է. մեծամտոլներ են եւ իրենց յաւակնութիւնները անհաւատալի չափով. Սալանիկը կուզեն։ Սերպերը իրենք իրենց ոչ մէկ քաղաքական կոիւի կամ գործունէութեան ընդունակ են... հիմակ Թուրք կառավարութիւնը սերպերը կը պաշտպանէ։ Այդ անոր սիրած միջոցն է. «բաժանէ որ տիրես»։ Երբ ցեղ մը միւսը կը գերազանցէ, իսկոյն Թոյլը գերազանցողին դէմ կը հանէ։

Մենք միշտ խաղաղութեան կողմնակից եղած ենք. բայց ժողովուրդը շատ գրգռուած է։ Պուլկարիոյ մէջ 150,000 Մակեդոնացի գաղթականներ կան եւ երեք հարիւրէն աւելի սպաններ... ատոնց մտքերը եւ վիշտերը ամբողջ ժողովրդեան կանցնին...

Մակեդոնացիները՝ խեղճ եւ մոռցուած ժողովուրդ մըն է։ Պէտք է որ այդ ժողովուրդը ապրի եւ յուսայ։ Առաջ Թուրքիան կրնար անոնց բան մը ընել։ Ցունական պատերազմէն վերջը Թուրքիա մեզի երեք թեմ տուաւ եւ իրաւունք դպրոցներ բանալու։ Բայց Դուրը եւ Եպարքոսը իրենց նշանակութիւնը կորսնցուցած են. բոլոր գործերը պալատի մէջ կը կատարուին, Սուլթանի խորհրդականներու ձեռքով։ Ատոնք միշտ կը խոստանան, բայց ոչինչ չեն ըներ. նոյնիսկ խնդիրները իրենց վեհապետին չեն հաղորդեր։

Սուլթանը հակառակ է ոեւէ բարենորոգման մը Մակեդոնիոյ մէջ»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՁԱՐ ՈԳԻՆ

Այդ չար ոգին Պապէտոնուցէվն է. եթէ այդ խաւարամիտ, վայրենի զգացմունքներով մարդը չըլլար, գուցէ ռուս ժողովուրդը այնքան դժբախտութիւններու չէր ենթարկուեր իր ներքին կեանքին մէջ, գուցէ այնքան բազմաթիւ երիտասարդներ զոհ չերթային...

Դեռ քսան տարի առաջ, 1882ին Պոպէտոնոսցէվ իսովարար ուսանողներու համար զօրաքանակներու մէջ տեղաւորցնելու սոսկալի պատիժի ծրագիրը կազմեց. սակայն թէ նախարարութիւնը եւ թէ Ալէքսանար երրորդ այդ ծրագրին իրագործման դէմ կեցան։

Վերջերս, Պոգալէֆով, սպաննուած կրթական նախարարը, Պոպէտոնոսցէվի ձեռնասուն, յանձն առաւ կատարել Պոպէտոնոսցէվի փայփայած ծրագիրը, ամէն պատասխանատուութիւն իր վրան առնելով, եւ այդ ծրագիրը իրագործելու իրաւունքը միայն իրեն վերապահեալ ընդունելով։

Ճիշդ է, առաջին օրերուն մէջ, ուզեց որ ամբողջ նախարարութիւնը իր վրան առնէր այդ օրինագծին իրականացման հետեւանքները, բայց երբ տեսաւ որ նախարարութիւնը չի համաձայնիր, աւելի կատղեցաւ ու մինակ ճամբայ ելաւ. եւ այդ իրեն կեանքը արժեցաւ։

Պոպէտոնոսցէվ դէմ կեցաւ Լորիս Մէլիքովի սպհմանադրութեան. Ալէքսանար երրորդը համոզելով որ սահմանադրութիւնը իրագործելը ժողովրդին կարծել պիտի տար թէ կառավարութիւնը թուլցեր է եւ ատոր համար կը վիշանի։ Պոպէտոնոսցէվ որոշեց ուսանողութիւնը հալածել, ճնշել, ատոր մէջ խեղդել ամէն մի ազատ ձգտում, մտածելով որ այդ տարրը սեղմելով պիտի խեղդած ըլլայ եւ ամբողջ ռուսական ազատական ձգտումները։ Բայց խաբուեցաւ։

Այդ խիստ միջոցները ոչ միայն չի կրցին ուսանողութիւնը ճնշել, այլ եւ աւելի բորբոքեցին ու գրգռեցին զանոնք անսահման միապետութեան դէմ։

Այսօր ոչ միայն ուսանողութիւնն է որ դէմ է կառավարութեան, այլ եւ ժողովրդին մէկ մասը, գլխաւորաբար գործաւորներու. յեղափոխական եւ ազատական գաղափարները այսօր թափանցած են բոլոր մեծ քաղաքներու գործաւորներու մէջ. իսկ ռուս գործաւորները եւրոպական գործաւորներու պէս բուն ժողովուրդէն, գիւղացի տարրէն բոլորովին կարուած տարր մը չեն կազմեր։

Ռուս գործաւորները շարունակ գիւղերուն հետ յարաբերութեան մէջ են, եւ գիւղացիներու հետ միշտ կը շփուին. կիսագործաւոր եւ կիսագիւղացիներ են, ու իրենց յեղափոխական եւ ազատական գաղափարները աւելի դիւրութեամբ եւ աւելի ընդարձակօրէն կը տարածեն գիւղացիներու մէջ, կը վարակեն զանոնք ազատական գաղափարներով եւ տեսիլներով։ Այդպէսով ռուս գիւղացին ալ կարթննայ իր սովորական դարեւոր թմրութենէն, կսկսի զգալ եւ հասկնալ իր հարստահարուած լինելը, կառավարութեան աւելորդ ու անպէտք բռնութիւնները եւ կը բռնկի։

Այդ բռնկումը կարծես թէ հեռու չէ. շատ մը ռուս մտածողներ արդէն գիւղացիներու մօտակայ ապստամբութիւնը կը դուշակեն եւ կառավարութեան խորհուրդ կուտան ձեռք քաշել խիստ միջոցներէն։

Ռուսաստանի չար ոգի Պոպէտո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵԱՆ ԳՈՅՆԸ

Զատկի շաբաթ օրն էր. արդէն եկեղեցիներուն զանգակները սկսել էին մի առանձին եռանդով զօղանջել եւ հայ քրիստոնեաներին եկեղեցի հրաւիրել։

Մարիամ տուտուն, իր շրջազգեստի առաջին փէշը վեր քաշած, մտամոլոր նստած էր խոհանոցի մէջ, ու իր առջեւը դրված կողովով հաւկիթներին էր նայում։ Նա խորին մտածումների մէջ էր ընկղմված, աչքերը խոնաւացել էին գաղտնի արցունքներից. չը գիտեմ ինչն էր զսպօ՞ւմ արցունքի յորդումը, թէ արցունքը չէր ուզում վազել եւ այս հանդիսաւոր ու տօնական երեկոն սուգի վերածել։

Վերջապէս նա մրմնջալով ելնելով.

— Ախ չեմ ուզեր հաւկիթ ներկել. չեմ կրնար կարմիր գոյն յեղուկի մէջ ձեռքերս թաթղել, աչքիս առջեւը կուգան ամուսինս, խեղճ զաւակս, իրենց արիւնի մէջ լողացող. եւ անոնց սպաննող երկու Թուրքերը, սիրելիներուս կարմիր արիւնով ներկված ձեռքերով

Ա՜հ ինչ գէշ սովորութիւն է. ասանկ մեծ տօնի մը համար անպատճառ հաւկիթ պէտք է ներկել եւ ան ալ կարմիր, արեան գոյնով կարմիր հաւկիթ...

Չի պիտի ներկեմ, չեմ կրնար, սիրտս չի դիմանար... բայց ի՞նչ ընեմ, հիմա տղաքը եկեղեցիէն պիտի գան, կարմիր հաւկիթ պիտի ուզեն, ներկն ալ իրենք են առած բերած. ի՞նչ ըսեմ, ի՞նչպէս բացատրեմ որ անոնց սիրտն ալ չի կոտրի։

Մարիամ տուտուն այդ մենախոսութեան մէջ էր, երբ ներս մտաւ տեղացի Փէմպէ հանըմը եւ տաճկերէն լեզուով սկսեց խօսել.

— Ի՞նչ է, Մարիամ հանըմ, ինչո՞ւ հաւկիթները չես ներկում, ինչո՞ւ առջեւդ ես դրել, ու նայում ես։

— Ներկել չեմ ուզեր. երբ կը մտածեմ թէ ձեռքերս կարմիր ներկին մէջ պիտի թաթխեմ, ամբողջ մարմինս կը դողայ, կը սարսռի։ Չես գիտեր ջուրիկս, ինչեր կանցնին կը դառնան սրտիս, հոգիս եւ գլուխս մէջ. Աստուած Սուլթան Համիտին հախէն գայ։ Ան չըլլար, ես, եւ ինծի հետ ալ շատ մը հայ մայրեր, ասանկ չի պիտի սարսափէին կարմիր գոյնէն եւ Զատկին հանդիսաւոր սրտով հաւկիթ պիտի ներկէին, ու իրենց տղաքները ուրախացնէին..

— Ի՞նչ ես ուզում ասել, Մարիամ տուտու, ճշմարիտ չեմ հասկանում. Սուլթանը ո՞ւր, Զատիկը ուր, եւ կարմիր հաւկիթ ներկելը ո՞ւր...

— Աւելի աղէկ, որ չես հասկնար Փէմպէ հանըմ... աչխարքիս մէջ չը հասկցողներն են որ հանդիսաւոր կապրին։ Պիտի հասկնայիր, եթէ դուն ալ իմ սեսածներս տեսնայիր եւ քաշածներս քաշէիր...

Աւելի աղէկ որ ոչ տեսած ես եւ ոչ ալ կը հասկնաս...

Այստեղ Մարիամ տուտուի արցունքները վազեցին. չը գիտեմ ինչը անկարող եղա՞ւ զսպել, թէ՞ արցունքները աւելի լաւ համարեցին դուրս ժայթքել...

* * *

Փէմպէ հանըմը մնաց չբարած. էլ մի խօսք արտասանել չը կարողացաւ, եւ անզգալաբար յանցաւորի կերպարանք ընդունեց. նա կնոջ յատուկ նախազգացումով գուշակեց թէ իր առջեւը կանգնածը մի վշտահար կին է եւ ինքը անդիտակցաբար փորեց փորփրեց նրա վշտերը։

Բայց բոլորովին լուռ կանգնելը կամ դուրս գնալն էլ անյարմար համարելով ասեց.

— Ներողութիւն, ես չը դիտէի թէ իմ խօսակցութիւնը այդ հետեւանքը կունենար։ Դու չես կարող ներկել, բայց տղայքն էլ մեղք են. նրանք էլ

նոսցէվ, սինոդի բրօքորօրը, Թօլսթոյը նզովողը, դեռ այնքան ապուշ, այնքան բռնակալ եւ բթամիտ է որ այդ բոլորը չի հասկնար. ան կը կարծէ թէ կառավարութիւն մը, որչափ ալ զօրաւոր ըլլայ ան, կրնայ ժողովուրդի մը կեանքի բնական ընթացքը կասեցնել։

* * *

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՃԱԲՈՆ

Ռուսիոյ տրամադրութիւնները Մանջուրիոյ մասին՝ մեծ յուզում պատճառեցին Ճաբոնի մէջ։ Ճաբոնի արտաքին գործոց նախարարութիւնը ամէն օր լիքն է քաղաքացիներով, որոնք կուգան ճիշդ տեղեկութիւններ առնելու ռուս-ճաբոնական յարաբերութիւններու մասին. ճաբոնական թերթերը կառավարութեան կոչ կընեն մեծ նաւատորմիղը պատրաստել, և բազմաթիւ ժողովուրդ զինավարժութեան հրաւիրեր են։

Աղդեցիկ Կոմս Օքումա ուժեղ յօդուածով մը ժողովուրդը Ռուսիոյ դէմ պատերազմելու կը հրաւիրէ։ Այդ հրաւէրին արձագանք տուեր են միւս բոլոր թերթերը։

Այդ պատճառով ալ Ճաբոնի կառավարութիւնը խիստ և կլուրուկ բողոքագիր մը դրկած է ռուս կառավարութեան, յայտարարելով որ Ճաբոն ոչ ոքի՛ ով որ ալ ըլլայ, չի պիտի թոյլատրէ Զինական շահերը ոտքի տակ տալ։

Ճաբոնի այդ բողոքին Ռուսիա մօտաւորապէս հետեւեալը պատասխանած է.

Նախ որ Ռուսիա տրամադիր չէ երրորդ պետութեան մը հետ համաձայնութեան պայմաններ փնտռել, քանի որ դեռ բանակցութիւնները կը շարունակուին։

Երկրորդ՝ համաձայնութիւնը առժամեայ է և միայն ռուս զօրքերու յետս կանչումը դիւրացնելուն նպատակով է։ Զինաստանի իշխանութեան դէմ ոտնձգութիւններ չեն և ոչ ալ ուրիշ պետութեանց իրաւունքներուն դէմ։

Երրորդ՝ Ռուսիա համոզուած է թէ՝ երբ համաձայնութիւնը յայտարարուի ամէնքն ալ պիտի հաւանին, իսկ եթէ Ճաբոն կառավարութեան համար փոքրիկ դժգոհութեան առիթ տուող կէտեր գտնուին համաձայնութեան մէջ, այն ատեն կարելի պիտի ըլլայ բարեկամական առաջադրութիւններ ընել։

Այսօր արդէն յայտնի է որ Մանջուրիոյ խնդրոյն մէջ Ռուսիա մեղմ դիրք մը բռնած է, այլևս տիրապետելու յայտնի ձգտումները չուրն ինկան։ Գուցէ ատոր միակ պատճառ ոչ եւրոպական պետութիւններու բողոքները ու հակառակութիւնները են, այլ Ճաբոնը։ Ճաբոն զօրեղ պետութիւն մըն է, և Ռուսիոյ դէմ պատերազմի բռնուած միջոցին եթէ չը յաղթէ ալ, դժուարաւ կը յաղթուի։ Ռուսիա Ճաբոնի հետ պատերազմելով մեծ վտանգներու պիտի հանդիպի. և ատոր համար է որ այնչափ ալ չի ուզեր Ճաբոնը իր դէմը գրգռել։

* * *

ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ամսոյս 26ին Սոֆիայի դատախազը և հարցաքննիչ դատաւորը Բ. Կոմիթէի տնդամներու ներկայութեամբ խուզարկեր են Կոմիթէի գրասենեակը։

Այդ խուզարկութեան միջոցին Կոմիթէի գրասենեակի դիմաց ժողովուած ամբոխը բուռն համակրական ցոյց մը ըրեր է Պօրիս Սարաֆովին, Կոմիթէի նախագահին, անոր ներս մտած միջոցին։ Դատական խուզարկիչ յանձնաժողովը քանի մը թուղթեր վերցուցած է, որոնք, կը ենթադրուին, կը վերաբերին Պուքրէշի գործին։ Կոմիթէի միւս թուղթերուն և տետրակներուն յանձնաժողովը ձեռք չէ դպցուցած։ Խուզարկութենէն վերջը, գրասենեակի դռներու վրայ դրուած կնիքը վերցուեր է և գրասենեակը յանձնուեր է Կոմիթէի մարդոց գործերը վարել շարունակելու համար Բ. Կոմիթէի անդամ Պ. Կէօրկի Մինքովի նախագահութեամբ։

ՊՈՒԼԿԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ՄԸ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

«Փոշտա» պուլկար թերթի խմբագիրներէն մին Մ. Բ. Կոմիտէի անդամներու ձերբակալութեան առթիւ խօսակցութիւն մը ունեցեր է Սոֆիայի մէջ դատական բարձրաստիճան պաշտօնէի մը հետ։ Այդ պաշտօնեան հետեւեալը ըսած է.

«Ինծի կը թուի թէ հասարակութիւնը, մանաւանդ մեր մակեդոնացիները, տարբերութիւն չի դներ դատական և քաղաքական հալածանքներուն մէջ, և կը մտածէ թէ կառավարութիւնը մտադրութիւն ունի ոչնչացնել Կոմիթէն և մակեթոնական կազմակերպութիւնը։ Այդ ենթադրութիւնը բոլորովին սխալ է։ Պօրիս Սարաֆովը և իր ընկերները ոչ թէ իբր Մակեդոնական Կոմիթէի անդամներ ձերբակալուած, են այլ հսկողութեան տակ առնուած են այն եղեռնական դատի պատճառաւ որ տեղի ունեցաւ Պուքրէշի մէջ և անոնք ի բացակայութեան դատապարտուեցան։ Իսկ այդ առթիւ, ինչպէս դուք ալ գիտէք, անոնք արդէն առաջուընէ պատրաստականութիւն յայտնած են իշխանութեանց տրամադրութեան տակ դնել ինքզինքին։

Իսկ երբ խմբագիրը հարցուցած է թէ երկար պիտի մնա՞ն հսկողութեան տակ, պաշտօնեան պատասխաներ է.

«Այդ յայտնի չէ, որչափ ինծի յայտնի է անոնք մտադիր են բողոքել հարցաքննիչ դատաւորի իրենց ձերբակալելու համար տուած որոշումին դէմ. դատարանը երբ այդ բողոքը ստանայ, իսկոյն պիտի անով զբաղի և գուցէ մեղմ որոշում մը տայ, կամ թէ ազատ արձակէ, ի հարկէ երաշխաւորութեամբ։

Որչափ գիտեմ, հարցաքննիչ դատաւորին որոշման պատճէնը գիշերը յանձնուած է ձերբակալուածներուն»։

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Սելանիկէն նամակ մը կայ «Փոշթա» թերթին մէջ, որմէ հետեւեալը կը քաղենք.

«Ով աչքի առջեւ ինկած զէնքը ուսը չառնէր կռուելու երբ տեսնայ թէ իր կինը, աղջիկը բռնաբարուած են, իսկ զինքն ալ կուզեն ոչնչացնել։

Երկաթուղիի ամբողջ գծին վրայ, ամէն կայարան կը տեսնայի հարիւրական կապկպուած պուլկարներ, որոնց անասուններու պէս վագոնները կը լեցնէին կեդրոնական բանտերը տանելու համար... իսկ ինչ պիտի ըլլայ արդեօք երկրին ներսերը։

«Մակեդոնիա բոցի մէջ է. փոթորիկ մը կը դառնայ անոր երկնքին տակ։ Սոսկալի գործեր կը կատարուին։ Ամբողջ գիւղերը մոխիր դարձած են... այդ կը հաստատեն հրէաները անգամ։ Մարդ չի գիտեր որը գրէ, որը մտքին մէջ պահէ. ամէն քայլափոխի աւելի նոր, աւելի կատաղի գործ մը կիմանաս, որ կատարած են Թուրք իշխանութիւնները պուլկարներուն դէմ.

Այդ ասելով Մարիամ տուտուն խսկոյն շրջազգեստի փէշերը վար թողեց, գլուխը մի սեւ փուշի փաթթեց, հագաւ իր կիսամաշ վերարկուն ու տանից դուրս եկաւ։

Նա փողոցով անցնում էր մեքենայաբար, առանց մի բան տեսնելու. նրան ամէն ինչ կարմիր, արեան գոյնով էր երեւում. մարդիկ, կենդանիները, գետինը, տները, երկինքը ի մի խառնված արիւնագոյն յեղուկ զանգուած էին ներկայանում նրա աչքին, որի մէջ կատաղած, ամբողջովին արիւնի մէջ թաղված թուրքերը լողալով, իրենց կացինները, սրերը մեծ մեծ դանակները շարժելով կոտորում էին Մարիամի ծանօթներին, ազգականներին, բարեկամներին. եւ ահա դրանցից մէկը Մարիամի ամուսնու եւ սիրելի զաւակի, Զաւէնի գլուխները կարած գնտակների պէս օդի մէջ նետելով ու բռնելով մօտենում էր իրեն. Մարիամ տուտուն սարսափելի կերպով ճչաց փողոցի մէջ եւ դիակի նման գետին փռվեց...

Մարդիկ հաւաքվեցին... բարձրացրին ուշաթափ հայուհուն, իմացան նրա տունը եւ իսկոյն տուն տարին։

Փէմպէ հանրմը արդէն հաւկիթները ներկել էր ու շարում էր ափսէի մէջ, երբ բազմութիւնը տեսաւ, ու նրանց հետ ուշագնաց Մարիամ տուտուին, սաստիկ վրդովվելով բոլոր հաւկիթները գետին զարկեց աղաղակելով.

— Այս անպիտան հաւկիթներն էին պատճառը. եթէ նրանք չը լինէին Մարիամ տուտուն այդ օրը չէր ընկնի։

* * *

Կամաց կամաց Մարիամը ուշքի եկաւ։ Նա հիւանդ չէր, բայց մի տեսակ թոյլ էր զգում իրեն. նրան բերող մարդիկը արդէն գնացել էին, երկու Փոքրիկ զաւակները Աշոտը եւ Գարեգինը եկեղեցուց վերադարձել էին եւ իրանց մօր վիճակը իմանալով կարմիր հաւկիթով բոլորովին չէին հետաքրքրվում։

Փէմպէ հանրմը մի երկու անգամ իր տունը հանդիպելուց յետոյ՝ եկել էր եւ Մարիամի կերակուրների վրա էր հսկում որ կանոնաւոր կերպով եփվեն։ Նա ամէն բան կատարելուց յետոյ՝ միայն տուն գնաց։ Չէր գնալ, եթէ ինքն էլ երեխաներ չունենար։

Մարիամը, իր զաւակներովը միասին, առանց կարմիր հաւկիթի Զատկի սեղանին մօտեցան։

Նա մի տեսակ ուրախութիւն էր զգում որ սեղանի վրա բացակայ են այդ կարմիր հաւկիթները. երեխաներն էլ միմիայն իրենց մօր հիւանդութիւնը պատճառ ընդունելով իրենց կարմիր հաւկիթից զուրկ մնալուն, առանց բողոքի եւ գանգատի ընթրեցին...

ՎԱՐԴՕ

չը պէտք է հասկնան քու չը ներկելուդ պատճառը, եւ Զատիկ օրով, երբ կարմիր հաւկիթ չունենան իրենց տան մէջ, պիտի ախրեն, վշտանան։ Տուր ես ներկեմ, ներկը ո՞ւր ես դրել. դու գնա՛ դուրս, ես կեղեցի, աղօթք արա, իրդ կը հանդարտի, վշտերդ կը թեթեւանան։

— Շատ գնացի, շատ աղօթեցի, հինգ տարի շարունակ, բայց ոչ սիրտս հանգստացաւ, ոչ վշտերս թեթեւացան. ընդհակառակը աւելի սաստկացաւ։ Եւ այս տեսակ մեծ ոսներուն, մանաւանդ Զատկին՝ այդ վիշտը աւելի կը սաստկանայ, որովհետեւ կորուսած սիրելիներուս պակասութիւնը աւելի սուր կերպով աչքիս կը զարնէ։

— Վնաս չունի, կրկին գնա, ուր կուզես գնա՛, միայն հիմա, երբ սիրտդ, հոգիդ այս վիճակի մէջ են, տնէն դուրս ելիր։ Տան մէջ մի մ. այ։

— Ուր որ ալ երթամ նոյնն է. բայց քանի որ կը սիպես դուրս ելլամ, պիտի ելլամ։

Առաջնորդի փոխանորդ Զիտարով և տնտես Բոբով. բանտարկուած են Կուվարտացիի մէջ և տանջանքի մատնուած. ձերբակալուած է Պոլաշկի վանքի վանահայրը շատ մը ուսուցիչներ և վարժուհիներ, վերջիններս անպատուած են։

Այո, մարդ կը սարսափի, երբ այս ամէնը կը տեսնայ և կը լսէ Մակեդոնիա կաւերուէ.. ինչ որ պուլկարական է կայրի. ոհ որչափ մենք կը խաբուէինք պուլկարիոյ մէջ, ո՞րչափ հիմակ ինծի ոճրագործային կերեւայ Պուլկարիոյ մամուլի լռութիւնը։ Ո՞րչափ եղբայրասպանութիւն էր հոն մեր անտարբերութիւնը դէպի մակեդոնական խնդիրը։ Եւ կենդանի բողոք մը ալ չենք ըրած»։

ԼՆԱՄԱԿ ՕՏԷՍԱՑԻՑ

(Կրօն Միքայէլեանի Հայկական Կրթարանը

Վառնայից այս կողմերն է եկել Տիկին Միքայէլեան որի ամուսինը, Պ. Կրօն Միքայէլեան Վարնայի մէջ մասնաւոր դպրոց ունի «Հայկական կրթարան» անունով։ Տիկինը յայտարարում է որ այդ դպրոցի մէջ վերջին աղէտներից փախած որբերից բաւական թուով ձրիաբար դաստիարակվում և խնամվում են, ու այդ հիման վրա առաջնորդից դպրոցի օգտին հանգանակութիւն անելու արտօնաթուղթ է ստացել։

Վերջին տարիներում այնքան խաբեբաներ սուտ սուտ պատճառաբանութիւններով դրամ են կորզել որ այլ եւս հաւատ չէ մնացել. կասկածում ենք և այս տիկնոջ ասածների ճշդութեան մէջ. խնդրում ենք շտապով մեզ հաղորդէք թէ իսկապէս այդ հայկական կրթարանում տաճկաստանցի որբեր ձրիաբար դաստիարակվում և սնվում է՞ն։ (*)

Ֆ

1901 25 Մարտ

(*) Ցաւով ենք որ Պ. Կրօն Միքայէլեան կշտապի բացատրել այս հանելուկը !!!։

Ծ. խ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Յունվար ամսին (Պարսկաստանի Ռաշտ քաղաքի հայոց վարժարանին ի նպաստ Թուրքերէն, ռուսերէն և պարսկերէն լեզուներով ներկայացում մը արուեր է, որոնցմէ մօտ 100 լիրայի հասոյթ գոյացեր է. ներկայացումներուն ներկայ գտնուեր են կուսակալը, ռուս հիւպատոսը և շատ պարսիկներ. ամէնքն ալ առանձին նուերներ տուեր են։ Անգլիական հիւպատոսը սուգի (Թագուհիի մասին) պատճառով բացակայեր է, բայց կրկին իր նուէրը չէ զլացեր,

— Հիւսիսային Կովկասի Արմաւիր քաղաքի հայերը, որ արդէն որբանոցի մը ծախքը կը վճարեն, ուրիշ որբանոց մը բանալու համար գումար մը հաւաքեր են և իրենց փափաքը պատրիարքարանի հաղորդեր են։

— Պարսից Շահը առանձին ֆէրմանով Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը իր հովանաւորութեան տակ առեր է։

— Բաղէշի ուսումնական վարչութիւնը որոշեր է տեղական արդէն միացած վարժարանները հայ բողոքականներու վարժարաններուն միացնել։

— Թիֆլիզի նորաբաց աղջկանց Յովհաննեան վարժարան մտնելու համար չորս հարիւրէ աւելի աղջիկներ խնդիր տուեր են։

Ասոնցմէ միայն 210 հոգի ընդունուեր է։

— Բարիզի մատրան շինութեան համար Շանտ Էլիզէի կողմը 70000 ֆրանք արժողութեամբ յարմար դետին մը գնուեր է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Վիլհէլմի նման Անգլիոյ թագաւորն ալ երկրաշարժին առթիւ շնորհաւորական հեռագիր մը զրկած է Սուլթանին և խնդրած է Աստուծմէ որ միշտ պահէ ու պահպանէ Կարմիրին թանկագին կեանքը։ Անգլիական լրագիրներուն և ժողովուրդին մեծ մասը ու մանաւանդ ազատականները դժգոհ մնացած են Էտուարտ Է.ի այս ընթացքէն և կարարկեն թէ իրենց թագաւորը, Վիլհէլմի հետեւելով, կը պակսեցնէ անգլիական ազգին արժանապատուութեան զգացումը երբ շնորհաւորուած անձը է և կը մնայ աշխարհիս էն մեծ մարդասպանը ըստ Անգլիոյ մեծ մարդուն Կլատսթնի բացատրութեան։

Կառավարական թերթերը կը պնդեն թէ Էտուարտ Է.ի հեռագիրը պարզ պաշտօնական և քաղաքավարական հանգամանք մը ունի ու պէտք չէ անի նկատել դրդումի կամ հետեւողութեան արդիւնք։

— Սուլթան Համիտ հեռագրով մը կըպատասխանէ Վիլհէլմին և անոր սրտագեղ զգացումներուն շնորհակալ ըլլալէ վերջ՝ կը յայտնէ թէ երկրաշարժին առթիւ իր ունեցած ընթացքը միմիայն Աստուծոյ կամքին հպատակելու արդիւնքն է։

Սուլթանը շնորհակալ կըլլայ նաեւ Աստուծոյ որ կինքը պահպանեց վտանգէն ու կաղօթէ որ նախախնամութիւնը պահէ մարդկութիւնը այդ կարգի վտանգներէն։

Աղօթքդ ընդունելի ըլլայ, Ապտիւլ Համիտ, և ժամ առաջ վերնաս մէջտեղէն, վասն զի դուն ալ մին ես այդ փորձանքներէն ու աւելի գէշ՝ ամենէն մեծ վտանգը տարաբաղդ ազգերու։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Երեսփոխանական ժողովը երկրորդ ընթերցումով ալ ընդուներ է մամուլի նոր օրէնքը։

— Տառանորդի օրէնքը վերցուեր է. անոր պիտի փոխարինէ 1894 թուականին հիմնուած հողային տուրքի օրէնքը, փոքրիկ փոփոխութիւններով։

— Սթոյիլովի թաղման հանդէսը մեծ շքով կատարուեր է։

— Ազգային (պահպանողական) կուսակցութեան, որուն պետը հանգուցեալ Սթոյլովն էր, Սոֆիա գտնուող անդամները որոշեր են որ կուսակցութեան գործերը վարէ կեդրոնական քլիւպը, փոխ նախագահ Պարոն Դէչովի նախագահութեամբ։

Ամառը պատգամաւորներու ժողով մը տեղի պիտի ունենայ վերջնական պիւրօ մը կազմելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիոյ մէջ համոզուած են թէ Իտալիա չի հեռանայ երրեակ դաշնակցութենէն. «Կազէթ Նասիոնալ» կը հաղորդէ որ Իտալիոյ արտաքին գործոց նախարար Ցանարտէլլի Կոմս Պիլլովի յայտարարած է որ Իտալիոյ գերակշռող բոլոր տարրերը տրամադիր են խղճմտաբար պահպանել երեակ դաշնակցութիւնը։

ԱՄԵՐԻԿԱ

Ապստամբ Ֆիլիպինցիները ամէն օր մաս մաս անձնատուր կըլլան Ամերիկայի կառավարութեան. Մանիլիայի մէջ ի միջի այլոց անձնատուր եղած է և ժենէրալ Արէժօլա 800 մարդով միասին։

ՖՐԱՆՍԱ

Նախարարապետ Վալդէք Ռուսոյի վիճակը վիրաբուժական վերջին գործողութենէն ետքը բարւոքած է։

ԹՐԱՆՍՎԱԼ

Նախագահ Քրիւկէր «Մաթենի թղթակցին հետ ունեցած տեսակցութեան միջոցին ըսեր է։

«Եթէ անգլիացիները բուն իսկ իրենց շահը ըմբռնէին, պիտի տային մեր ուզած անկախութիւնը, վասնզի այդ պարագային պատրաստ՝ պիտի ըլլայինք մեծ զիջողութիւններ և զոհողութիւններ ընել։

Այն ատեն խաղաղութիւնը ընտ միշտ ապահովուած պէտք է ըլլար։

— Բրէթօրիայէն կը հեռագրեն որ Պոթայի ռազմական նոր ծրագիրներն է միշտ Քիշները նեղել և քանդել երկաթուղիի գիծերը։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկի մէջ պետական փողերանոցը հրոյ ճարակ եղած է։

ՉԻՆՍԱՏԱՆ

Բէքինէն Լօնտոն կը հեռագրեն թէ Լիհունկ Զանկ շնորհաղուրկ եղած է ռուսիոյ պահանջներուն ուժ տալուն պատճառաւ։

— Ռուսիա իր օտար երկիրներուն մէջ գտնուած դեսպաններուն հրամայած է տէրութեանց ծանուցանել որ ինք այլեւս չի պնտէր Չինաստանի հետ մասնաւոր պայմանագրութեան մը կապել Մանջուրիոյ մասին։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

«Իրաւունքի» 25 թիւը գրեթէ ամբողջովին նուիրուած է «Հարժումին», և անոր խմբագիր Վարդօ Արվախին։ Մեր անտարբերութիւնը դէպի այդ խենթերու երամը, արհամարական լռութիւնը դէպի այդ արարածները, ինչպէս կերեւի վերջնապէս կատղեցուցած է ատոնք։ Լաւ միջոցը գտած ենք. շարունակ պիտի լռենք և արհամարենք, մինչեւ որ կապելու ասոնցմէ հանին։

Ու յուսով ենք որ այդ օրը մօտիկ է։

☛ Զատկական տօներու առթիւ յառաջիկայ չորեքշաբթի «Շարժումա» չի պիտի հրատարակուի։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տոք. Վ. Տոտոմեանցի եւ Ե. Թոփչեանցի „Die sozial ökonomich Türcei“

Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Թուրքիայի մասին։

Գինը 2 մարկ ճանապարհածախսով դիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, NW. 7

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՀԱՐԺՈՒՄԻ“

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԿ

Отговорникъ:
Д-ръ МЖГЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.